

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ աճել է 34.4 %-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2002թ. հունվար-հուլիս	2002թ. հունվար-հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2002թ. հուլիս	2002թ. հունիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝	3554.4	134.4	750.3	93.6
Երկաթուղային տրանսպորտով որից	1043.3	158.0	188.6	125.0
արտահանվել են բեռներ	96.0	95.9	14.5	97.3
ներկրվել են բեռներ	538.5	125.3	106.9	1.8անգամ
ներհանրապետական փոխադրումներ	408.8	3.1անգամ	67.2	89.4
ավտոտրանսպորտով որից	2130.7	143.7	519.9	84.5
արտահանվել են բեռներ	63.7	106.7	9.4	100.0
ներկրվել են բեռներ	155.9	98.5	28.1	115.6
ներհանրապետական փոխադրումներ	1911.1	151.1	482.4	83.0
օդային տրանսպորտով¹ որից	5.1	77.3	1.1	122.2
արտահանվել են բեռներ	2.1	75.0	0.6	150.0
ներկրվել են բեռներ	3.0	78.9	0.5	100.0
խողովակաշարային տրանսպորտով	375.3	75.8	40.7	117.6

Երկաթուղային տրանսպորտ: 2002թ. հունվար-հուլիսին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ աճել է 58.0%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 51.6% (2001թ. հունվար-հուլիսի 65.1%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 9.2% (2001թ. հունվար-հուլիսի 15.2%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 39.2% (2001թ. հունվար-հուլիսի 19.7%-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2002թ. հունվար-հուլիսին 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ անտառային բեռների (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլ), փոխադրման ծավալն ավելացել է 20.0 անգամ, հանքային շինարարական նյութերինը՝ 12.2, սև մետաղներինը՝ 10.0, հանքաքար երկաթի և մանգանի փոխադրման ծավալը՝ 6.6, ցեմենտինը՝ 2.1, քարածուխինը՝ 1.8 անգամ, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 25.4%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 19.0%-ով: Սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 17.2%-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2002թ. հունվար-հուլիսին կազմել է 71 վազոն և 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ ավելացել 24 միավորով, իսկ բեռնումը կազմել է 42 վազոն և ավելացել 21 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 8.1 օր և 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ արագացել է 4.3 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 43.7%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 7.3% (2001թ. հունվար-հուլիսի 10.7%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 8.7% (2001թ. հունվար-հուլիսի 9.0%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 3.0% (2001թ. հունվար-հուլիսի 4.0%-ի

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-հուլիսին»


1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

դիմաց), դրանից 33 ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 6.1% (2001թ. հունվար-հուլիսի 8.5%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 89.7% (2001թ. հունվար-հուլիսի 85.3%-ի դիմաց):

Օդային տրանսպորտ: 2002թ. հունվար-հուլիսին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի ցուցանիշի նկատմամբ նվազել է 22.7%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 58.8% (2001թ. հունվար-հուլիսի 57.6%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 41.2% (2001թ. հունվար-հուլիսի 42.4%-ի դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ: 2002թ. հունվար-հուլիսին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի ցուցանիշի նկատմամբ նվազել է 24.2%-ով:

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2002թ. հունվար-հուլիսին (տոկոսներով)



2001թ. հունվար-հուլիսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 25.0%, ավտոմոբիլայինը՝ 56.1%, օդայինը՝ 0.2%, խողովակաշարայինը՝ 18.7%:

Բեռնաշրջանառություն: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ նվազել է 11.5%-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2002թ. հունվար-հուլիս	2002թ. հունվար-հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2002թ. հուլիս	2002թ. հունիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն. տոննա-կմ այդ թվում՝	767.7	88.5	104.7	127.4
Երկաթուղային տրանսպորտով	229.0	133.2	41.9	146.0
Ավտոտրանսպորտով	30.1	123.9	7.0	111.1
Օդային տրանսպորտով	3.6	67.9	1.0	166.7
Խողովակաշարային տրանսպորտով	505.0	75.8	54.8	117.6

Ուղևորափոխադրումներ: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հուլիսի ցուցանիշի նկատմամբ աճել է 0.9%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2002թ. հունվար-հուլիս	2002թ. հունվար-հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2002թ. հուլիս	2002թ. հուլիսը 2002թ. հունիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	89873.8	100.9	15433.5	117.3
Երկաթուղային տրանսպորտով	564.4	84.8	102.6	111.9
Ավտոտրանսպորտով	74443.9	104.6	12439.6	112.7
Օդային տրանսպորտով ¹	440.0	114.0	90.6	115.7
Էլեկտրատրանսպորտով	14425.5	85.6	2800.7	144.0

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2002թ. հունվար-հուլիսին (տոկոսներով)



2001թ. հունվար-հուլիսին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.7%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 80.0%, օդային տրանսպորտինը՝ 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 18.9%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2002թ. հունվար-հուլիսին կազմել է 57.1%, իսկ տրոլեյբուսով՝ 24.5%, տրամվայով՝ 16.0% և ճոպանուղով՝ 2.4%:

Ուղևորաշրջանառություն: 2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ աճել է 4.9%-ով:

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

**Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն
ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2002թ. հունվար- հուլիս	2002թ.հունվար- հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2002թ. հուլիս	2002թ.հուլիսը 2002թ. հունիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ այդ թվում՝	1406.8	104.9	249.6	112.9
երկաթուղային տրանսպորտով	24.5	93.9	4.2	116.7
ավտոտրանսպորտով	938.0	106.6	155.5	107.9
օդային տրանսպորտով	385.8	105.9	78.2	120.0
էլեկտրատրանսպորտով	58.5	83.0	11.7	146.3

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2002թ. հունվար-հուլիսին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարները 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ նվազել է 12.5%-ով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2002թ. հունվար- հուլիս	2002թ.հունվար- հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %	2002թ. հուլիս	2002թ. հուլիսը 2002թ. հունիսի նկատմամբ, %
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանենը	467	87.5	79	119.7
Զոհվել են, մարդ	97	82.9	14	82.3
Վիրավորվել են ,մարդ	559	87.8	99	133.8